

1 609

# ՀԱՐԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

վաղամեռիկ Անտոն կիսասարկաւագի Փիլո-  
սեան Արդուինցւոյ

ԱՇԱԿԵՐՑԻՆ ՔԱՀԱՆԱԾՈՎԵՑՈՒՅՆ ԼԵՏՈՆԵՍՈՆ


ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՈՐ Ի ՀՈՌՎՄ

ԽՕՍԵՑԱԻ \*)

Յակոբ վարդապետ Բագարատեան նախկին  
աշակերտ Հռովմայ Լևոնեան Հայ դպրոցին.

Ծ 16-Ն Մայիսի 1909 ամի.

\*) Ծանօթ. դամբանական ձառը խօսեցաւ նոյն ինքն եր-  
կասիրող Արդուինց զերեզմանատան, ի ներկա-  
տուեան բազմարիւ ժողովրդեան, հանգուցելոյ  
հողին յանձնելին անմիջապէս յառաջ:



յաւ եարգադրութեամբ Սարգիս  
Տէր-Աբրահամեանի ի տպարանի

Մ. Թ. Ճուլարտեանցի յԱխալցխայ:



1909.

20.01

2010

~~280~~ ~~206~~  
~~418-174~~ ~~15~~ Աջ  
ՃԱՐ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

վաղամենիկ Անտոն կիսասարկաւագի Փիլո-  
սեան Արդուինցւոյ

Ա.ՇԱ.ՆԵՐՑԻՆ ՔԱ.ՀԱ.ՆԱ.ՅԵՏԱ.ԿԱ.Ն Լ.ԽՈՂԵՍ.Ն

ՀԱ.Յ ԴՎԳԲՈՑԻ ՈՐ Ի ՀՈ.ՈՎ.Մ



ԽՕՍԵԶԱԻ \*)

Յակոբ վարդապետ Բագարատեան նախկին  
աշակերտ Հռովմայ Լևոնեան Հայ դպրոցին.



\*) Ծանօթ. դամբանական ճանդարձական լին եր-  
կասիրողը Արդուինց զերեզմանատան, ի ներկա-  
յութեան բազմաթիւ ժողովրդեան, հանգուցելոյ  
դիակը հողին յանձնելէն անմիջապէս յառաջ:

Տպադրուեցաւ կարգադրութեամբ Սարգիս  
վարդապետ Տէր-Աբրահամեանի ի տպարանի

Մ. Թ. Ճուլարտեանցի յԱխալցիսայ:

1909.

ՅԱՐԱՀԱՅԱՀԻ 1847-84

30409-4-2


-ովՓ - Արագականական առաջ թխմարտի  
լուրդիւրդ մասն

առաջայի առաջարկութեան առաջարկութեան

այսուհետ առաջարկութեան

### Կ ԱՅԵՒՅՈՅ

ամբակ մանակացան ամբարդի զիման  
միջոցքը չու մասնակ ըստուած աշխատու



առաջարկ առաջարկութեան առաջարկութեան  
առաջարկ առաջարկութեան առաջարկութեան  
առաջարկութեան առաջարկութեան առաջարկութեան  
առաջարկութեան առաջարկութեան առաջարկութեան

ամբակ պահպանական ամբարդի  
պահպանական ամբարդի ամբարդի

պահպանական ամբարդի պահպանական ամբարդի

.6081

1 285:

13382.58



Աղքասիկ Անոն կիսուազերաւազ Փի-  
լուեանի յիշատակը յաւերձացներ և նրա  
վշտահար մօր Մրրունց սիրար մխիթարելու  
նպատակով տպապատմեան է արվում այս  
գամբանականը տղականներից և նրա յիշա-  
տակը յարդութիրից հանգանակուած գումարով։



1996  
1995  
1994  
1993  
1992

Ողբացեալ Անտոն Կիստսարկաւագ Փի-  
լոսեանի յիշատակը յաւերժացնելու և նրա  
վշտահար մօր Սրբուհոյ սիրտը մխիթարելու  
նպատակով՝ տպագրութեան է տրվում այս  
դամբանականը, ազգականներից և նրա յիշա-  
տակը յարգողներից հանգանակուած գումարով։

Հայոց իշխան Ռամակար ապօղուա  
Կառավար իշխան ապօղուա և ապօղուա  
Երևան, զի ցուկրով Եր Տեսն առա  
նուա ( իմաս դ. 7. )

Համոյ եղեալ Աստոծոյ՝ սիրեցաւ . . .

Կատարեալ ի սակաւում՝ եղից ժամանակս  
Երկայնս, զի ցանկալի էր Տեսոն անձն  
Առրա: ( իմաս դ. 7. )

Ինձ պիտի զիպէք քու զամբանականդ խօսել՝ ով  
Սիրեցեալդ իմ 8. Անտոն կիսասարկաւագ Փիլոսեան. ինձ,  
որին զու մատաղ տիոցդ աշակերտած էիր; որի մէջ  
Նկատած ըլլալով մեծ հոգի, վայլուն ապագայ և արդիւ-  
նաւէտ կեանք՝ հազարների մէջ ընտրած և ուղարկած  
էի եկեղեցական ուսումին. և այն յուսով էի տոգորուած  
որ պիտի լինէիր աջակից և ապա յաջորդ առաքելական  
պաշտօնի մէջ. ես ընդհակառակն, մեռած պիտի քարոզէի  
զրեզ, և, ականատես պիտի լինէի քու ստոնացած դիա-  
կին, այլագունուած կերպարանքիդ, որ եկած կանգնած  
է այս տիսնը զերեզմանիս եզերքին ուր պիտի իջնէ մի  
քանի քօպէից յետոյ: Ո՞վ անպատում աղէտք, ով իմ ան-  
դարմանելի վատարախտութեանս, ով ունայնութիւն աշ-  
խարհի:

Սրանից մօտաւորապէս տարի ու կէս յառաջ՝ հոն  
չոռոմում իր ուսման ընթացքի ժամանակ մի ծանր հիւան-  
դութիւն բռնեց մեր այս ողբացեալ կիսասարկաւագին, որի  
պատճառաւ ստիպուած եղաւ, ընդհատել իր ուսմանց ըն-  
թացքը. այդ հիւանդութիւնը գնալով զարգացաւ իր մէջ  
ինչքան որ ամէն հոգատարութեամբ և խնամքով պատըս-  
պարուած էր, բայց և այնպէս անսպասելի կերպով յաղ-  
թեց իրա երիտասարդական ոյժերին, և նրան զոհ ըրաւ

անողոքելի մահուան մանգաղին: Այս այսօր անողորմ մահը հօճում է իրա զարհութելի յաղթանակով՝ խճլով իր սիրելեաց գրկիցը մի երխտասարդ գոյութիւն: 2դիտեմ, սգաւորութեանս ընկերակից հանդիսականներ, ինչպէս կարող պիտի լինիմբ զսպել մեր սրտերի թախիծն և արցունքը այս սրտաճմիկ տեսարանիս առաջը. զեռ ևս ծաղիկ հասակին մէջ կորուցել է սա իրա թարմ երեսաց տեսքը. քաղցրահայեաց աչքերը կիսալուսնի ձեռվ խաւարել են. անմոռնչ սառել են այն երկնաժամիտ շրթունքը, իմաստութեան մէջ կրթուած այն լեզուն այժմ անխօսուն կափել է քմբին. իսկ անվեհեր և վառվուն սիրտը դադարել է բարախելուց: Ի՞նչպէս ուրեմն չի լանք ու ողքանք այսպիսի մ՛տ անդարմանի կրկին կորստեան վրայ. ինչու որ մինչ նա կորցնում է իրա դեռափթիթ կեանքը իսկ մենք իրմով կորցնում ենք մի հազուադիւտ դանձ, մի թանկագին գոյութիւն՝ որից շատ բաներ էր սպասուած մեր Կրօնը և մեր Հայրենիքը:

Եթէ միանգամ ինձպէս մօտանց ճանաչած լինէիք նրան, յարգելի հանդիսականներ, այն ատեն լաւ ըմբռունած կը լինէիք որ նա բարձր կոչման և բարձր իդեալների տէր անձնաւորութիւն մ' էր, և այն ատեն կ'ըմբռնէիք ինձպէս իմ խօսքերիս ճշմարտութիւնը՝ որ մեր Հայրենիքը իրմով շատ բան կորցուց: Եւ այս ըմբռնելու համար ինդրում եմ լաւ ուշադրութիւն դարցնել իրա ծաղիկ կենաց կարճ պատմութեան: Յարգոյ Տ. Անտոն կիսասարկաւագը տեսաւ աշխարհիս լոյսը մեր Արդուրնոյ բաղաքի մէջ յամին 1887 Յունվար 19-ին, Փիլոսեան, ազնիւտոհմի բարեպաշտ ծնողներից. նա յորովայնէ ընտրեալ ծնաւ և Ս. աւագանից ելիկով մանուկ մարգարէ բար-

ձրելոյն կոչեցաւ: Դեռ մանկութեան դեռափթիթ դիոց մէջ իր Սստուածավախ ծնողների դաստիարակութեամբը՝ յաւիտենական ճշմարտութեանց լոյսը ցռլանում էր նրա մտքի մէջ. այս անշէջ արեգակի ճառագայթներով վարդակարմիր բացուեց նրա կենաց արշալոյսը. Աստուծոյ գաղափարն էր զոր կենդանի ըմբռնեց: Օրից օր մեծացաւ այս գաղափարների մէջ, և ինչ օրինակներ որ նա տեսնում էր իրա ընտանեկան շրջապատում բարեպաշտ ծնողներից նոյները գիրազանց սկսից իրա մէջ օրինակել: Նոյն գաղափարները և օրինակները օրէցօր աւելի խոր թափանցեցին և անջնջելի զրոշմեցան իրա սրտին մէջ: Նոյն մատաղ հասակում սկսել էր ցոյց տալ իր ապագայ կոչման նշանները՝ ժամասիրութեամբ, փութաջանութեամբ և իր բարի օրինակներով որ ցոյց էր տալիո իրա հասակակիցներին:

Ծյսպէս հասաւ նա յարբունս, և իր սրտիկն սկսեց սիրել և փափագել ոչ թէ աշխարհի ունայնութեանց եզիպտոսական սոխերին կամ ապականացու վայելչութեանց, հապա սիրտ սրտէ ուզեց միայն եկեղեցական սուրբ կոչումը և կուսակրօնութեան ուխտին բոլորանուէր Սստուծուն նուիրւիլը: Եւ երբ լսեց Սամուէլի պէս Սստուածային կոչման ներքին ձայնը անմիջապէս ելաւ ցնծութեամբ այն աստիճաններն որ առաջնորդում են ի յարկն սրբութեան, ուր բնակում է Անմահն: Բայց աւաղ ինչ տխուր անդրադառութիւն մը պատկերանում է հոս մշտքիս առաջը. այն 1899-ը Սեպտեմբեր ամսում, որ ըեզ շատերի մէջ ընտրած Հոռվմ էի ուղարկում հոգեոր ուսման սկիզբ տալու համար, ինչքան յուսալիր և քաղցր ուրախութիւն էր, որ պատել էր զիս՝ երբ զքեզ նաւակի

մէջ էի դնում. բայց աւաղ, ինչքան տարբեր է այսօրուայ տպաւորութիւնը, որ տասը տարուց յետոյ եկել եմ հոս այս տխուր գերեզմանի մօտ, անոր մէջ զըեղ դնելու և ցկեանս վերջին հրաժեշտու տալու:

Անպատմելի ինդութեամբ թռաւ, սլացաւ մեր մանուկ Անտոնը դէպի մարտիրոսաց բաղաքը; դէպի կաթողիկէ աշխարհի մալրաքաղաքը. իրա հետ տանում էր իրա մեծ հոգին հոն ճշմարտութեան աղրիւրի ակից լցնելու զայն թէ գիտութեանց և թէ բարի վարուց պաշարով։ Եւ երբ գեղածիծաղ միջերկրականի վրայից սահում էր շոգենաւը, գաշտերու և ձորերու միջից զլորուում էր շոգեկառքը, ինչ էր մտածում արդիօր եռանթնալից պատանին. Հայրենիքն հոռացած էր և գնում էր բաղաքակրթեալ միջավայր մը, կրնար հոն բաջ հանդիսանալ և լինել գիտուն, ու քսաներորդ դարու մէջ անուն և համրաւ վաստկել. յիտոյ աստիճանէ աստիճան բարձրանալով, օր մը գուցէ. բայց ինչ, նա մէ մտածմունք ունէր միայն, որ է լինել քահանայ և ատով լինել օգտակար հոգւոց փրկութեան և Աղքիս։ Այս դիտաւորութեամբ պաշրուած մտաւ նա չումուռ Քահանայապետական-Լեռնեան չայկազնեան կղերանոցի Սրբավայրում։

Եւ հէնց այն տեղ էր որ ինքը սկսեց ցոյց տալ իր հանճարով որ իրա կոշումը շատ բարձր էր և ոչ թէ Արդուընոյ հստա, ներուի ինձ համարձակելու, այլ նոյն իսկ միը ազգի համար նշանաւոր դէմքերից մին լինելու։

Իմացականութիւնը որ լուսով պէս նուրբ, ոգեղէն փայլուն և տեսանիլի է, առանց սեղմնլու հաղորդել էր նրան ամենայն բարեաց պարզեատուն. ընդարձակ հանճար մը ծովու պէս անբաւ հորիզոնով, գործունեայ հան-

ճար՝ որ բնութեան գաղտնիքները մտաւոր աշա:ց առաջը պարզելով, ապադայ երջանկութեան վորը ինչ համը առնել էր տալիս նրան. թափանցիկ հանճար մը, որ միտքը կ' ամբառնար մինչև գիտնական աշխարհի ամենաբարձր վայրերին, ինչպէս աղաւնի մը որ մարբափայլ թռչում է տղմուտ ճահիճների վրայից։ Անխմանալի արագութեամբ ըմբռնում էր և իրացնում Լատինական և Խտալական լեզուները, նոյպէս և Յունական և Գաղղիական լեզուների քերականութիւնը- նոյպէս և խոր թափանձում և լուծում էր փիլիսոփայական, տրամաբանական, աստղաբաշխական, մատեմատիկական և ֆիզիբական ամենախոր և դժար հարցերը. Փիլիսոփայական այս ճիւղերի մէջ այնքան իփայլեցաւ և յառաջացաւ որ վստահ իրա յաջողութեան վրայ առանձին քննութիւն բռնեց և, ընդունեց “փիլիսոփայութեան վարդապետու”, տիտղոսը (ΠΙΤΤΙΩΡ ΡΕΤΙΛΟΣΟΡΙΑΕ): Այս բանիո վկայ են այնքան այդ արծաթեայ և ոսկեզօծ մրցանակ—մետալները, այս բանիս վկայ է այդ իրա թեսերի տակ առած վախաթուած վկայագիրը դիպլոմը։ Այս բանիս վկայ է ինքը այս իր անշնչացած դիտակը. որովհետեւ այնպիսի փութաջանութեամբ տուել էր ինքն իրան ուսմանց և գիտութեանց՝ որ բոլորովին մոռացել էր իր կեանը և առողջութիւնը, այնպէս որ իրա փափկասուն մարմինը չը կարենալով տանիլ այսքան մտաւոր ծանը աշխատանաց՝ ընկճվեց վերջապէս այն զարհուրելի հիւանդութեան տակ, որ վինքը բերեց այս զերեզմանիս գուռը։ Եւ անոր համար՝ ինչքան ծափահարութեանց և կեցցէների տարափի տակ ընդունած այդ շրանշանները՝ այսօր մեզ գառն ցաւոց և վշտաց առարկայ են զարձել։

Մեր պատանի Անտոնը ինչքան բարձր տաղանդ և

ընդունակութիւն ցոյց էր տուել ուսմանց մէջ, կրկնապատիկ աւելի իրեւ աստղ փայլեց նա Սրբութեան և քարի վարուց մէջ: Կղերանոցի մէջ մուտք գործելուց յետոյ՝ գերապատիւ Տ. Պ. Գոյունեան, դպրոցի մեծաւորը սքանչացս: սրա քարի յատկութիւններով, ամէն ինձ զըած նամակների մէջ երբ պէտք էր յիշել Անտոնին յատկացնում էր անուանը՝ միշտ այս ածականը,, հրեշտակային Անտոնը “ կամ „, հրեշտակ ի մարմի “: Նա այնքան խանդավառ էր և պարծում էր մեր Անտոնով, որ ինձ մինչև անգամ շնորհակալութիւն էր յայտնում այսպիսի ընտրութեանս համար: Իսկ մեզ հանրածանօթ Գիր. Տ. Մարգիս Վ. Տէր-Սրբահամեանը, որ Յ-4 տարիներով լաւ էր ուսումնասիրել հոն կղերանոցում մոր Անտոնի վարը և եղական ձիրքերը, լսելով իմ վերջին նամակէս սրա հիւանդութեան ծանրանալը, ինձ այսպէս էր զրում ամսոյս 8-ի թուով. „Սաստիկ ճնշեց և սիրտս պատառեց „հրեշտակային երիտասարդ յարգելի Անտոնի անյուսալի „վիճակը. ոհ որբան ցաւալի է այդ. չեմ կարող մտածել „Փիլոսեանի վերայ առանց արցունքի. ’ի սէր Աստուծոյ, „եթէ հսարը կայ աշխատեցէր ազատել նրան, որ օրինա „կելի քահանայացումն է մեծ տաղանդի տէր, փայլուն ա „պազայ”:

Անտոնը կղերանոցում այնքան էր գարգացել Սրբութեան մէջ, որ իրա ընկերները խանդավառ, սիրում էին նրան և իրա օրինակները աշխատում էին իրանց վրայ ընդգծել: Անտոնը իրա ընկերների հոգին և ուրախութիւնն էր՝ իրա հոգեոր և վառ խօսեցութիւններով և քաղցր վարմունքով: Անտոնը դպրոցական կանոնաց և իր մեծաւորաց հու հպատակ և հնագանդ էր, գիտնալով

որ այդ կանոնների ճշգրիտ պահպանութեամբ միայն կարող էր զգենու իրա մէջ գՔրիստոս. այդ կանոններով և մեծաւորների ձայնով էր որ Աստուած խօսում էր իրա մէջ և յայտնում իր կամքը. դրանցով միայն կարող էր խոյանալ դէպ ’ի կատարելութիւն: Անտոնը չ'ուներ այլ ևս սեպհական կամք, այնքան նա մահացուցել էր իրա մէջ „եսը“ որ մինչև անգամ իր հիւանդութեան ծանր ըոպէններում չ'ունէր ոչ մի տրտունջ կամ դիմագրութիւն իրեն տրուած առողջապահական հրահանգի մէջ: Նա հաւատուով, յուսով և անսահման սիրով սիրում էր իւր Արարշին, և այս ցոյց էր տալիս մանաւանդ իրա մտաւորական աղօթքների մէջ. երբ այնքան էր խորասուզվում և յափըշտակում Աստուածային սիրոյ մէջ, որ շատ անգամներ նկատուել էր արցունքով թրջուած իրա առաջի չոքարանը: Նա աստուածային այս սիրոյ մէջ ստացաւ այն վառ կրօնասիրութեան և հոգւոց վրկութեան եռանդը որով նա տոշորվում էր օրէցօր հասնել քահանայութեան աստիճանին, որպէսպի կարողանար իրագործել իրա մէջ սնուցած գաղափարները և նպատակները:

Իր բարեպաշտական գործոց ամենանուիրականն էր Յիսուսի ամենասուրբ Սրտին տածած ջերմեռանդութիւնը և այս սուրբ Սրտի հնոցից առաւ իր մէջ սիրոյ կայծը: Իսկ առ ամենասուրբ կոյս Աստուածածինն ունեցած որդիւկան սիրոյ չափն ու սահմանը չի կար. Նրա սիրոյն զոհում էր իբ ժամերը աղօթելով. նրա անունը և ջերմեռանդութիւնը միշտ իր շրթունքների վրայ էր և իր ընկերների հետ սոէպ խօսում էր նրա գովասանքների մասին. և գիտնալով որ առ Տիրամայրն ունեցած սէրը ոչ այնքան խօսքով հապա մանաւանդ գործքով կարող էր

արտայայտել. աշխատում էր իր մէջ ընդօրինակել ամենասուրբ Աստուածամօր առաքինութեանց օրինակները, մանաւանդ Անոր կուսութիւնը:

Մեր պատանի Անտոնը կուսութեան մասին կարելի էր իրաւամբ նմանեցնել Ս. Ալոգիոսին կամ Բերդմանսին, ինչպէս նմանեցնում էին իր ընկերները և իր մեծաւորները վկայում էին նրա մարմնեղէն հրեշտակ լինելուն . . . այնքան զգայարանաց պահպանութիւն, այնքան եքեակայութեանց զգուշութիւն և թէ ներքին և թէ արտաքին համեստութիւն նկատելի էր իր մէջը:

Իր խոստովանահայրերը շատ անդամ չէին կարող նիւթ գտնել իր մէջ արձակման համար:

Այս սկզբունքներով և այս հոգւով տոգորուած մինչդու յառաջ էր գնում աստուածաբանական ուսմունքն ալ իւրացնելու երբ անողոք հիւանդութիւնը վրայ հասաւ և յաղթեց և պատնէշ զարձաւ իր ուսմունքը շարունակելու. և այսպէս քանդեց անոր մէջ և քայրայեց եռանդու և ապագայ արդիւնաւէտ կենաց ասպարէզը.

Ստիպուեց ընդհատել դպրոցական կեանքը և ինը տարուց յետոյ եկաւ հոս իր ծննդավայրում անցեալ 1908 տարուայ մայիսի վերջերը՝ կազզուրուելու համար:

Ամբողջ մի տարուայ ընթացքում ցոյց տուեց իր շըչապատղներին և ծանօթներին իր առաքինութիւնները, վառվուն մեծ հոդին և իր խորիմաստ հանճարը: Ահա այդ յատկութիւնների պատճառաւ է որ աւելի մեծ ցաւով վշտահարուած ենք բոլորս այսօր իրա կորստեամբը:

1908 թւի հոկտեմբերի 14-ին ընդունեց Սարաթո-

վում Կիսասարկաւագութեան Ս. Աստիճանը, անկից վերջը աւելի յաղթուած հիւանդութիւնից, սկսեց միշտ դէպի վատը նահանջել իր առողջութիւնը: Բայց մեր յարգելի Տ. Ընտոնը ինչքսն որ օրինակներ ցոյց էր տուել իր բարեպաշտութեանը, նոյնքան աւելի արիութիւն և համբերութիւն ցոյց տուաւ տակաւ առ տակաւ մաշող այն հիւանդութեան մէջ, ամեննկին չի լսուեց իր բերանից ամենափոքր տրտունջ մը, այլ միշտ կը ժըպտար նոյն իսկ իր ծանր ըոպակներում:

Իր վերջին օրերում ըսել էր իր սիրելեաց որ „, ինձ համար մի լայր, որովհետեւ ես լաւագոյն տեղ եմ գնում “:

Նոյն այս յուսով տոգորուած Սրբոց մահուամբ կնքեց իր մահկանացուն մայիս ամսոյս լոյս 15-ի գիշերը, յանձնելով իր սրբամնեալ հոգին իւր Արարշին ձեռքում:

Ուղղում եմ այժմ իմ վերջին խօսքս ձեզ, յարգելի հաղիսականներ, և մանաւանդ ձեզ Սիրելի կիսասարկաւագիս ազգականներ, դուք մի այնքան տոշորուիք և մորմոքուիք իրեն թէ ձեր Անտոնի մէջ անկատար մնացին իր նպատակները և փափազները ոչ, սա իր ընթացքը կատարած է, իր հաւատքը պահել է, այժմ կայ և մնայ նրան առաքելական վաստակոց պսակը:

Նա թէպէտ և քահանայական օծութիւնը չէր ընդունել և քահանայական պաշտօնները չէր կատարել բայց նա փափազել էր այդ պաշտօնի պարտականութեանցը և մասամբ աշխատել էր հոգւոց փրկութեան համար:

Նա իր ընկերներից և ծանոթներից շատերին բարի ուղղութեան էր բերել իր օրինակներովը և խօսքերովը: Եւ ես հաւատացած եմ, որ ինչպէս Աստուած վարձատրեց իր Դաւիթ մարդարէի փափազը Աստուածուն տաճար շինելու, նոյնպէս և կ'ընդունի մեր Տ. Անտոնի բարի օրինակաց կարճ և աղջու առաքելութիւնը, ու իր փափազներն և եռանդը իբրև իրավործած կը վարձատրէ մեր Ողորմած Տէրը:

Եւ արդ ով սիրեցեալ և ողբացեալդ իմ Տ. Անտոն Կիսառարկաւագ Փիլոսեան, մնում է ինձ տալ վերջին իմ հրաժարական ողջոյնս քեզ իբրև հոգեոր զաւակիս և աշակերտիս ու հղբայրակցիս:

Եկած հասած է ըոպէն որ պիտի իջնես այս տխուր գերեզմանի մէջ հոն սպասելու վերջին փողոյն, փափուկ և կոյս մարմինդ մի քանի օրից պիտի սկսի ապականվել ու հող դառնալ:

Ով գառն յիշատակներ, ով անդառնալի վճիռ ով սրտաճմիկ հրաժեշտ: . . .

Այլ ես ՚ի նշան յաւէրժական տխուր սիրոյս ինչ տամ քեզ. վարդ մը. այլ կը թարշամի. հառաշանք մը,— այլ կը նուազի, արտասուզ մը— այլ կը ցամաքի:

Այլ ես ինչ տամ քեզ, եթէ ոչ փառած սըրտի խոնկն, որ է աղօթքը. այս այս է իմ վերջին նուէրը որ կը տամ քեզ:

Խաղաղութեանմբ լինի քո գերեզմանը, հոն հանգչին քո խոշտանկեալ ոսկորները. իսկ քո օրինակները միշտ անուշահոտ բուրեն մեր մէջը:

Աղօթում եմ Աստուածուն, որ հանգիստ յաւի-

տենական պարզեց սըրբասնեալ հոգւոյդ իւր արքայութեան մէջ, ուր օրով յառաջ հասնես, և մեզ համար ալ բարեխօս լինես Աստուածոյ աթոռոյն առաջը. Ամէն:





353

938

0027680

938



